ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂԻ ՎԱՐՔԱԳԾՈՒՄ

ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ,

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. հասցե՝ *gevorgyansrbuhi@aspu.am*

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ,

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. հասցե՝ *avet1syan.armen@inbox.ru*

DOI: 10.24234/scientific.v1i44.42

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է բացահայտել համացանցի սոցիալ-հոգեբանական բացասական, դեստրուկտիվ ազդեցության պատճառները, հետևանքները, դրանց արտահայտման ձևերը ուսանողների կրթական գործընթացում: Խնդրի ուսումնասիրումն էական դեր է կատարում ուղղակի (անմիջական) և անուղղակի պատկերացում կազմելու սոցիալ-հոգեբանական բացասական ազդեցությունների պատճառների մասին, հասկանալու և կանխատեսելու, ինչպես նաև հետագայում մշակելու որոշակի գործիքակազմ՝ նվազեցնելու վերը նշված դեստրուկտիվ վարքի ազդեցությունները:

Հոդվածում պարզաբանված է դեստրուկտիվ վարքի հետևանքները, որոնք բացասական ազդեցություն են ունենում ինչպես ուսանողի անձնային աճի, սոցիալականացման, նրա վարքի, այնպես էլ ուսումնառության որակի վրա:

Բանալի բառեր՝ համացանց, տեղեկատվություն, սոցիալ-հոգեբանական ազդեցություն, դեստրուկտիվ վարքագիծ, ուսանող:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեռահասների, պատանիների և երիտասարդների վրա համացանցի, տեղեկատվության բացասական, կամ ավելին՝ դեստրուկտիվ ազդեցության մասին

վերջին տարիներին կատարվել են բազմաբնույթ և մեծաթիվ հետազոտություններ: Ժամանակակից աշխարհում համացանցը տեղեկատվության ձեռքբերման ամենահիմնական աղբյուրն է, սակայն այն հանդես է գալիս ոչ միայն որպես զուտ տեղեկատվության ձեռքբերման աղբյուր, այլև ուսուցման, ժամանցի, ամենաբազմազան ծառայությունների մատուցման, հեռահար հաղորդակցման, աշխատանքի փնտրման, զբաղվածության ուսումնասիրման միջոց:

Այսօր երիտասարդությունը չի պատկերացնում իր կյանքն առանց համացանցի, նույնիսկ այն դեպքում, երբ կարող է ձևավորվել հոգեբանական կախվածություն: Հասկանալի է, որ համացանցն անձի վրա ունենում է նաև բացասական ազդեցություն: Բազմաթիվ հետազոտություններում նշվում է, որ համացանցը, տեղեկատվությունը կարող են նաև բացասական, դեստրուկտիվ ազդեցություն ունենալ երիտասարդի վրա:

Տեղեկատվական սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցությունն անձի կամ խմբի վրա սոցիալական ակտիվության դրսևորման ձև է (վերջինիս արդյունքում հուզականությամբ հագեցած փոփոխություն է կատարվում անձի կամ խմբի բնականոն վարքագծում, որը սոցիալականացման տեսանկյունից բացասական է գնահատվում): Յու.Ա.Կլեյբերգն (Клейберг, 2008) առանձնացնում է դեստրուկտիվ վարքի երեք տեսակ. 1) արտաքին դեստրուկտիվ վարքագիծ, 2) անուղղակի կամ մասնակի դեստրուկտիվ վարքագիծ, 3) սեփական անձին ուղղված դեստրուկտիվ վարքագիծ: Նշանակում է, որ պետք է իրականացվեն սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական կանխարգելիչ աշխատանքներ, որոնք կկանխարգելեն անձի կամ խմբային մակարդակում սոցիալականացման անհաջողությունները, ձախողումները, կնվազեցնեն հաղորդակցման գործընթացում դեստրուկտիվ ազդեցությունների հավանականությունը: Այս դեպքում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը, դրանցով ստացվող տեղեկատվությունն, ըստ էության, կդառնան մասնագիտական, սոցիալ-հոգեբանական, սոցիալականացման տեսանկյուններից անվտանգ, ընդունելի, ոչ ռիսկային: Պարզ է, որ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ռիսկայնությունն անձի և խմբի համար կարելի է նվազեցնել սոցիալ-հոգեբանական համապատասխան պատրաստվածության արդյունքում: Կարևոր է նաև

ուսումնասիրվեն անձի կառուցվածքային այն բաղադրիչները, որոնք պայմանավորված են տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներով, դրանց տարվածությամբ քանի որ դրանք հիմք են դառնում կախվածության ձևավորման և այլ բացասական դրսևորումների համար:

Յուրաքանչյուր անձ ունի կրթամշակութային պահանջմունքներ, որոնք տարիքային և սոցիալականացման տարբեր փուլերում, բովանդակային և դրսևորումների առումով փոփոխությունների են ենթարկվում կյանքի տարբեր իրավիճակներում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հենվելով Ա. Մասլոուի կողմից առանձնացված պահանջմունքների բաղադրիչների կամ մակարդաների վրա (Маслоу А., 2019)՝ կարող ենք նշել, որ դրանցից մի քանիսը կարող են բավարարել համացանցում (օրինակ՝ սիրո, ինքնահարգանքի, ինքնահրացման և ինքնարտահայտման պահանջմունքները): Իհարկե, կարող ենք շատ դեպքերում դա գնահատել որպես պաշտպանական հոգեբանական մեխանիզմների դրսևորումներ (Sherman, Cohen, 2006; Toma, Hancock, 2012): Վերոնշյալ մասնագետներն ուսումնասիրել են նաև համացանցում անցկացնելու ժամանակահատվածի և անձի վրա վերջինիս ազդեցության կապը: Այն կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական՝ դեստրուկտիվ, քանի որ առանձին դեպքերում համացանցում անցկացնելու տևական ժամանակահատվածը կարող է առաջացնել բացասական հույզեր, սթրեսներ, տագնապայնություն, նյարդայնություն, ընկերների և ընտանիքի անդամների հետ բարդ հարաբերություններ, սահմանափակումներ, կյանքի ակտիվության թուլացում: Ուսանողների դեպքում կարող են նվազել՝ *1)ուսումնական գործընթացի, պարապմունքների նկատմամբ հետաքրքրությունը, 2)ուսումնառության գործընթացի որակը:*

Համացանցում երկար ժամանակ անցկացնելը թուլացնում է ուսանողի ընկալման մակարդակը, աշխատունակությունը, ուշադրությունը կենտրոնացնելու հնարավորությունը: Լինում են հանձնարարություններ, որ ուսանողը պետք է կարդա ու մշակի, սովորի նյութը մենագրությունից, սակայն ուսանողը համացանցում կարդում է հանձնարարված հեղինակի կոնկրետ ստեղծագործության մասին

համառոտ վերլուծությունը, նկարագրությունը: Արդյունքում հարցականի տակ է դրվում հիմնարար գիտելիքի ձեռքբերումը:

3) Շփումների հաճախականությունը: Նրանք օրվա մեծ մասն անցկացնում են մեկուսացած, համացանցում: Արդյունքում չեն ձևավորվում բարձրագույն կրթություն ստացող անձի, և ընդհանրապես՝ երիտասարդի համար շատ կարևոր հաղորդակցման, իրականությունն ադեկվատ ընկալելու, գնահատելու, անորոշ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու, իր և այլոց՝ ընկերների, հարազատների համար պատասխանատվություն վերցնելու, ինքնաներկայացման, խմբում արդյունավետ գործառնելու, համագործակցելու և այլ կարողունակություններ: Վերջիններս գնահատվում են որպես 21-րդ դարի աշխատաշուկայում անձի մրցունակությունը, և ընդհանրապես, անձի սոցիալականացման հաջողությունն ապահովող կարողություններ:

4) *Ուսանող երիտասարդի համար սոցիալականացման տեսանկյունից խնդրահարույց է նաև սոցիալական խմբերում ընդգրկվելու, որոշակի դիրք ունենալու, համապատասխան դերեր ստանձնելու կարողությունների ձևավորումը:* Վերոնշյալ բացասական կամ ավելին՝ դեստրուկտիվ դրսևորումները վկայում են, որ հարցականի տակ է դրվում, փաստորեն, ուսանող երիտասարդության հոգեբանական անվտանգության խնդիրը, իհարկե՝ այստեղ խոսքը անձնային մակարդակի մասին չէ միայն: Հավաքական մակարդակում, որպես սոցիալական պայմանական խումբ, ուսանող երիտասարդությունը յուրաքանչյուր երկրի ամենաակտիվ, մտավոր ներուժ ունեցող և ապագային միտված համակազմ է, որի վրա հոգեբանական նպատակային և ոչ նպատակային ազդեցությունը կարող է սպառնալ երկրի, պետության և ազգային անվտանգությանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խնդիրն ավելի է սրվում այսօր Հայաստանի Հանրապետության դեպքում հետպատերազմական կամ, տարբեր փորձագետ մասնագետների կարծիքով, իրական լողացող պատերազմական իրավիճակում, երբ հակառակորդը համացանցի միջոցով, մասնավորապես սոցիալական ցանցերով նպատակաուղղված, համակարգված և պլանավորված տեղեկատվական, հոգեբանական պատերազմ է վարում: Վերջինիս հիմնական թիրախ-սոցիալական

խմբերից մեկը ուսանող երիտասարդությունն է: Այս բացասական, դեստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ազդեցությունը կարող է հակառակորդի կողմից ապահովվել ուսանող երիտասարդին հոգեբանական տեսանկյունից ոչ առողջ, ոչ ադեկվատ վիրտուալ խմբերում ընդգրկելով: Ուսանող երիտասարդը կարող է ընդգրկվել վիրտուալ մի խմբում և ունենալ ամենօրյա, նույնիսկ ամենժամյա շփումներ անծանոթ մարդկանց հետ, որոնք իրականում կարող են լինել հանցագործներ, աղանդավորներ, թշնամի երկրների հատուկ ծառայությունների աշխատակիցներ: Որպես թիրախ ընտրված ուսանող երիտասարդի կամ խմբի վրա սոցիալ-հոգեբանական ազդեցությունը ծրագրավորված է, պլանավորված և նպատակաուղղված: Այն, որպես փորձարկված տեխնոլոգիա, մեթոդ, մեթոդիկա, տեխնիկա, իրականացնում է կա՛մ հատուկ պատրաստություն անցած անձը, կա՛մ խումբը: Յուրաքանչյուր նմանատիպ ծրագիր կարող է լինել և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ գործառնության համար: Ուսանող երիտասարդի, պետության, ազգային շահի համար վտանգավոր՝ համացանցով իրականացվող այդ ազդեցությունը կարող է դրսևորվել և՛ ուղղակի, բացահայտ, և՛ անուղղակի, քողարկված ձևով: Բացի վերոնշյալ վտանգը, կարող են վիրտուալ խմբերում ընդգրկված լինել անկիրթ, ապազգային, ինտելեկտի ցածր մակարդակով, բացասական սովորություններ ունեցող անձինք: Սոցիալ-հոգեբանական բացասական, դեստրուկտիվ ազդեցության տեսանկյունից իրավիճակն ավելի է բարդանում, երբ ուսանող երիտասարդն այդ վիրտուալ խումբն սկսում է ընկալել որպես էտալոնային (ռեֆերենտային) և մյուս շփումներում, նույնիսկ անմիջական դեմ առ դեմ հարաբերություններում, առաջնորդվում է այդ խմբում ընդունված նորմերով, արժեքներով, ընկալումներով, դրանցով է կողմնորոշվում և գնահատում իրողությունները, կյանքի տարբեր իրավիճակները, իրական անձանց, ավելին՝ դրանց հիման վրա է սկսում ընտրել ընկերներ:

Համացանցի բացասական, դեստրուկտիվ ազդեցությունն ուսանող երիտասարդի անձի վրա կարող է լինել ոչ միայն ուղղակի՝ հոգեվիճակի, անձի հոգեբանական առանձնահատկությունների, վարքագծի վրա, այլ նաև անուղղակի, օրինակ՝ ուսումնառության որակի վրա: Վերջինս կարող է վերաբերել ուսանող երիտասարդի անձնական տվյալների հասանելիությանն այլ անձանց կողմից,

ծրագրային խափանումների, սարքերի վնասման արդյունքում ուսումնական նյութի, կատարված ուսումնական առաջադրանքների, հանձնարարությունների էլեկտրոնային տարբերակների կորստին: Պայմանականորեն, համացանցի վերոնշյալ բացասական ազդեցություններն անվանում են տեխնիկական վնասներ, որոնք միևնույնն է, կարող են ուսանող երիտասարդի անձի վրա ունենալ սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցություն: Անմիջական կամ ուղղակի սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցություններ ուսանող երիտասարդի անձի վրա կարող են ունենալ ագրեսիվ, դաժանություններով լի տեսարաններով, բարոյական, արժեքային տեսանկյունից ցածր որակ ունեցող տեսահոլովակները, հաղորդաշարերը, քննարկումները, գովազդները: Վերջիններս կարող են ձևավորել նաև հետաքրքրություն բացասական երևույթների նկատմամբ, հակվածություն, խթանել բացասական սովորությունների դրսևորումները: Այստեղ շատ կարևոր է նշել, որ որոշակի տեղեկատվություն ինքն իրենով թեև կարող է սոցիալ-հոգեբանական ազդեցությունների տեսանկյունից ուսանող երիտասարդի անձի համար չլինել վտանգավոր, ռիսկային, սակայն ուսումնառության որակի վրա թողնել բացասական ազդեցություն: Այսպես, երկար ժամանակահատված համացանցում անցկացնելով, հատկապես բջջային հեռախոսով, երիտասարդի աշխատունակության, ընկալունակության մակարդակն իջնում է, հոգնում, լարվում են աչքերը, դժվար է կենտրոնանում ուշադրությունը տեքստերի վրա, հատկապես համացանցային գույներից, պատկերներից հետո:

Ուսանող երիտասարդության բացասական սովորությունները կարող են ակտիվանալ ժամանցի վայրերում՝ ակումբներում, սրճարաններում, ռեստորաններում, պարահրապարակներում, այլ զվարճանքների ժամանակ, ալկոհոլի, թմրամիջոցներ, արհեստական խթանիչներ օգտագործելիս, որոնց ձեռքբերման եղանակների և ազդեցությունների մասին՝ որպես «դրական» երևույթներ, ուսանող երիտասարդները կարող են հանդիպել համացանցում և տրվել գայթակղություններին: Վերոնշյալ իրավիճակներում նաև վտանգ կամ ռիսկ է առաջանում ֆիզիկական, սեռական բռնությունների, որոնք համացանցում կարող են ներկայացվել որպես հրապուրիչ դրսևորումներ և դրդել նմանակումների: Արդյունքում դրանք կարող են հետաքրքրել երիտասարդին, դրդել փորձելու, զգալու

այն, ինչ զգում և «վայելում» են տեսահոլովակների, տեսանյութերի հերոսները, հատկապես, եթե այդ հերոսներն իրական մարդիկ են և իրենց շրջապատում գնահատվում են որպես ուժեղ, կյանքը սիրող և վայելող անձինք:

Համացանցի սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության հետևանք կարող են լինել նաև շեղվող վարքի, հանցածին դիրքորոշումների, իրավախախտումների դրսևորումները: Վերջիններս դառնում են նմանակման, ընդօրինակման հոգեբանական մեխանիզմների հետևանք: Իրական կյանքում միջանձնային հարաբերությունների, շփումների սահմանափակումները և առցանց շփումների ընդլայնումը մեծացնում է վերոնշյալ ռիսկերի դրսևորման հավանականությունը: Շատ դեպքերում սոցիալական ցանցերի օգտատերերը, տարբեր կայքերի հակահասարակական, հակաիրավական վարքագծի դրսևորումներ ունեցող անձանց ներկայացնում են որպես հերոսներ, ուժեղ կերպարներ: Վերջիններս դեռահասների, պատանիների, երիտասարդների համար դառնում են նմանակման օբյեկտներ, իսկ նրանց արժեհամակարգը, արժեքները՝ էտալոնային:

Ուսանող երիտասարդության վրա, նշել ենք արդեն, որ համացանցը կարող է ունենալ անուղղակի բացասական ազդեցություն: Համացանցում երկար ժամանակ զբաղվածությունը կարող է ձևավորել ուսանող երիտասարդի հոգեբանական կախվածություն համացանցից: Վերջինս կարող ենք համարել բացասական սովորություն: Երիտասարդը չի կարողանում ընկալել և կառավարել ժամանակը, օրվա մեծ մասն անցկացնում է վիրտուալ հարթակում, չի կարողանում ճիշտ պլանավորել, չի հասցնում կատարել ինքնուրույն հանձնարարությունները, պատրաստվել դասերին, քննություններին, շփվել ընկերների, հարազատների հետ: Վերջինս վտանգում է նաև հաղորդակցման կարողությունների ձևավորումը, դրանց զարգացումը, որն էլ բացի որպես անձի սոցիալականացման խնդիր, բացասական ազդեցություն է ունենում նաև բազմաթիվ, հատկապես՝ մարդ-մարդ տեսակի մասնագիտությունների դեպքում հաջողություններ ունենալու գործում: Արդյունքում աշխատանքային կոլեկտիվում, կոնկրետ խմբում երիտասարդները հարմարման դժվարություններ են ունենում, չեն կարողանում արդյունավետ համագործակցել, իրականացնել համատեղ համաձայնեցված գործողություններ, առաջանում են

կոնֆլիկտներ: Համագործակցության, հաղորդակցման կարողունակությունը 21-րդ դարի հմտություն է, որն անհրաժեշտ է կարիերայի պլանավորման, կառավարման, աշխատաշուկայում մրցունակության ապահովման գործընթացներում: Այն առավել կարևոր և առանձնահատուկ նշանակություն է ձեռքբերում այն երիտասարդ տղաների համար, որոնք զորակոչվում են ժամկետային պարտադիր զինվորական ծառայության:

Համացանցից կախվածության դեպքում, երբ երիտասարդը տարբեր պատճառներով զրկվում է համացանցից օգտվելու հասանելիությունից, կարող է դրսևորել նեգատիվիզմ, ժխտողականություն, ագրեսիվություն միջանձնային հարաբերություններում, ընտանիքում, ունենալ կյանքի իմաստի, հետաքրքրության կորստի զգացում, ամեն ինչ նրանց համար դառնում է ձանձրալի, աննպատակ, նյարդայնացնող, քանի որ երիտասարդի կարծիքով, կյանքը դառնում է անիմաստ, անգույն, քանի որ իր համար ամենակարևորը՝ համացանցը, որը լցնում էր նրա օրը, չկա: Այս իրավիճակին ականատես եղանք 2022 թվականի փետրվար-մարտ ամիսներին Ռուսաստանի Դաշնությունում, երբ ռուս-ուկրաինական պատերազմի սկզբնական փուլում արգելափակվեցին սոցիալական ցանցերը, տարբեր հավելվածներ՝ you tube, tik tok և այլն, երբ բազմաթիվ երիտասարդներ, նաև ուսանող, ուղիղ եթերում լաց էին լինում, ողբում, որ իրենց կյանքը, կյանքի նպատակը մի քանի րոպեում անէացավ, կորավ և նրանք չգիտեն, թե ինչ են անելու, ինչպես են շարունակելու ապրել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսանող երիտասարդության վրա համացանցի բացասական, դեստրուկտիվ ազդեցությունը լուրջ ուսումնասիրման նյութ է բուհական համակարգում (հիմնական ձևերը, մեխանիզմները, հետևանքները, դրանց դրսևորումները):

Քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ մոտեցումները հաստատում են, որ.

1. Համացանցը ուսանող երիտասարդության վրա հանգամանքների բերումով կարող է հանգեցնել բացասական, դեստրուկտիվ ազդեցության:
2. Համացանցի բացասական, դեստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ազդեցությունը դրսևորվում է ուղղակի և անուղղակի (միջնորդավորված)

ձևերով՝ կախված անհատական և խմբային փոխգործակցության պայմաններից:

3. Ուսանող երիտասարդի վրա համացանցի ազդեցությունը կարող է ունենալ և՛ սոցիալ-հոգաբանական, և՛ վարքագծային դրսևորումների բացասական հետևանքներ, ինչպիսիք են տագնապայնությունը, հուզական անկայունությունը, համագործակցության, աշխատունակության, ժամանակի կառավարման, ուսումնառության դժվարությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Клейберг Ю. А. (2009). Типология деструктивного поведения. *Вестник*, *1*, 130–135.

Маслоу А. (2019). Мотивация и личность (Vol. 3). СПБ, Питер.

Sherman D.K, Cohen G.L. (2006). The Psychology of Self defense: Self-affirmation theory. *Advances in Experimental Social Psychology*, *38*, 183–242.

Toma C.L., Hancock J.T. (2013). Self-Affirmation Underlies Facebook Use. *Personality and Social Psychology Bulletin*, *39*(3), 321–331.

REFERENCE LIST

Klejberg YU. A. (2009). Tipologiya destruktivnogo povedeniya *(Typology of distractive behavior)*. Vestnik, 1, 130–135.

Maslou A. (2019). Motivaciya i lichnost *(Motivation and personality)*. (Vol. 3). SPB, Piter.

Sherman D.K, Cohen G.L. (2006). The Psychology of Self defense: Self-affirmation theory. *Advances in Experimental Social Psychology*, *38*, 183–242.

Toma C.L., Hancock J.T. (2013). Self-Affirmation Underlies Facebook Use. *Personality and Social Psychology Bulletin*, *39*(3), 321–331.

РЕЗЮМЕ

ПОСЛЕДСТВИЯ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ДЕСТРУКТИВНОГО ВОЗДЕЙСТВИЯ ИНТЕРНЕТА НА ПОВЕДЕНИЕ СТУДЕНТОВ

СРБУИ ГЕВОРКЯН, АРМЕН АВЕТИСЯН

Цель статьи - выявить причины, последствия и формы проявления социально-психологического негативного, деструктивного влияния сети Интернет в образовательном процессе студентов. Изучение проблемы играет существенную роль в формировании прямого (непосредственного) и косвенного представления о причинах негативных социально-психологических воздействий, осмыслении и прогнозировании их, а также дальнейшей отработке определенных инструментов снижения последствий вышеуказанных явлений. деструктивное поведение.

В статье рассматриваются важнейшие последствия деструктивного поведения, которые негативно сказываются на личностном росте учащегося, социализации, его поведении, качестве обучения.

Ключевые слова: интернет, информация, социально-психологическое воздействие, деструктивное поведение, студент.

ABSTRACT

THE CONSEQUENCES OF THE SOCIAL-PSYCHOLOGICAL DESTRUCTIVE EFFECT OF THE INTERNET ON STUDENT'S BEHAVIOR

SRBUI GEVORGYAN, ARMEN AVETISYAN

The purpose of the article is to identify the causes, consequences, and forms of expression of the socio-psychological negative, destructive influence of the Internet in the educational process of students. The study of the problem plays an essential role in forming a direct (immediate) and indirect understanding of the causes of negative socio-psychological effects, understanding and predicting them, as well as further developing certain tools to reduce the effects of the above-mentioned destructive behavior.

The article clarifies the most important consequences of destructive behavior,

which have a negative impact on students' personal growth, socialization, their behavior, and the quality of learning.

Key words: internet, information, socio-psychological impact, destructive behavior, a student.

Հոդվածը ստացվել է՝ 16.02.2023թ.

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 17.02.2023թ.

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 15.03.2023թ.